# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 նոյեմբերի 2013թվականի N 8

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Արտիմետի գյուղական համայնքի գյուղապետարանում և համայնքի ենթակայության կազմակերպություններում գույքագրում կատարելու նպատակով.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին N 8 կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 5 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մովսիսյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2013 թ. Նոյեմբերի 13
գ.Արտիմետ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետի
գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի
նոյեմբերի 13-ի N 11 կարգադրության

ԿԱԶՄ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

Հանձնաժողովի նախագահ

1. Մանվել Սահակյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

2. Անահիտ Հովհաննիսյան - աշխատակազմի առաջատար մասնագետ

3..Սերյոժա Հովհաննիսյան - ավագանու անդամ

4. Արտակ Ռուշանյան - ավագանու անդամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 նոյեմբերի 2013թվականի N 9

ՄԱՆՎԵԼ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158 և 159 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին » նո. 1384-Ն որոշմամբ .

1. 2013 թվականի նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Մանվել Լյուդվիկի Սահակյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 24 /20 նվազագույն 4 լրացուցիչ/ օր տևողությամբ:

2. Աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հունվարի 3- ից:

3. Համայնքի ղեկավարի տեղակալի լիազորությունները ժամանակավորապես վերապահել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյանին:

4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2013 թ. Նոյեմբերի 22
գ.Արտիմետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2013թվականի N 16

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Դերենիկ Աբգարյանը (ծնված 18.03.1951թ.) Լյուդմիլա Աբգարյանը /ծնված 25.08.1953թ. / Արթուր Աբգարյանը /ծնված 29.04.1977թ./ Արամ Աբգարյանը /ծնված 03.10.1980թ./ դիմել են Արմավիրի մարզի, Արտիմետ Մեխանիզատորների թիվ 20 հասցեում գտնվող , իրեն պատկանող օրինական 0.1343 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք -շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության համաինքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

1.Վերականգնել Արմավիրի մարզի, Արտիմետ համայնքի Մեխանիզատորների թիվ 20 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Դերենիկ Աբգարյանի (ծնված 18.03.1951թ.) Լյուդմիլա Աբգարյանը /ծնված 25.08.1953թ. / Արթուր Աբգարյանը /ծնված 29.04.1977թ./ Արամ Աբգարյանը /ծնված 03.10.1980թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.1343 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են « Հայաստանի Հանրապետության համաինքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի

տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Դերենիկ Աբգարյանի (ծնված 18.03.1951թ.) Լյուդմիլա Աբգարյանը /ծնված 25.08.1953թ. / Արթուր Աբգարյանը /ծնված 29.04.1977թ./ Արամ Աբգարյանը /ծնված 03.10.1980թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.0054-0004 ծածկագրին տալ Մեխանիզատորների թիվ 20 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2013թ. Դեկտեմբերի 13
գ.Արտիմետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013թվականի N 17

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Ջանես Հովհաննեսի Նազարյանը /ծնված 11.12.1958թ./ Օֆիկ Գարեգինի Ժամհարյանը /ծնված 08.11.1957թ./ Պողոս Ջանեսի Նազարյանը ծնված 15.11.1981թ./ Անուշ Ջանեսի Նազարյանը /ծնված 15.11.1983թ./ դիմել են Արմավիրի մարզի, Արտիմետ Շիրազի թիվ 12 հասցեում գտնվող, իրեն պատկանող օրինական 0.08352 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ. հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բնակիչներ Ջանես Հովհաննեսի Նազարյանը /ծնված 11.12.1958թ./ Օֆիկ Գարեգինի Ժամհարյանը /ծնված 08.11.1957թ./ Պողոս Ջանեսի Նազարյանը ծնված 15.11.1981թ./ Անուշ Ջանեսի Նազարյանը /ծնված 15.11.1983թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.08352 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փատաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ջանես Հովհաննեսի Նազարյանը /ծնված 11.12.1958թ./ Օֆիկ Գարեգինի Ժամհարյանը /ծնված 08.11.1957թ./ Պողոս Ջանեսի Նազարյանը ծնված 15.11.1981թ./ Անուշ Ջանեսի Նազարյանը /ծնված 15.11.1983թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. 0041-0014 ծածկագրին տալ Շիրազի թիվ12 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2013թ. Հունվարի 22
գ.Արտիմետ